7152

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 100-24

Ձեռնարկողը՝ **Էմին Եղիազարյան**
Արագածոտնի մարզ, Լեռնագոգ բնակավայր 1-ին փ. տուն 38

Գործունեությունը՝ **Նախկին «Տապան» ռեստորանի շինությունները պահպանելու նպատակով ափամերձ հատվածի ափապաշտպան և ինժեներական լուծումների իրականացում**
Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք,
Ծովագյուղ բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 100 - 24

«28» հունիսի 2024 թ.

Նախկին «Տապան» ռեստորանի շինությունները պահպանելու նպատակով ափամերձ հատվածի ափապաշտպան և ինժեներական լուծումների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Էմին Եղիազարյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր

Ներածական մաս. Էմին Եղիազարյանի կողմից փորձաքննության է ներկայացվել Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի, Սևան - Դիլիջան ավտոմայրուղի 2-8 կմ, 1 ճաշարան հասցեում գտնվող շենքերի և շինությունների պահպանման նպատակով ափապաշտպան միջոցառումների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը (այսուհետ՝ Հայտ): Նախագիծը մշակվել է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 11-ի N 83 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Գործունեության համար տրամադրվող հողամասը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում, որի մակերեսը 0,83404 հա է: Այն վարձակալության իրավունքով պատկանում է քաղաքացի Էմին Եղիազարյանին: Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված:

Կառուցապատման լուծումները նախատեսված են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի՝ «Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց իրականացվելիք տարածական կազմակերպման միջոցառումների ուղեցույցը հաստատելու մասին» N 32 հրամանի համաձայն:

Նկարագրական մաս. Հողամասը և շինությունները տեղակայված են Սևան համայնքի վարչական սահմանում, «Սևան» ազգային պարկի հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված կառուցապատման տարածքում՝ Երևան-Սևան-Իջևան ավտոմայրուղու աջակողմյան հատվածում:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Նախատեսվում է գաբիոնային արկղերով հենապատ (հիմքի նիշը՝ 1900,5, գագաթի նիշը՝ 1905,0), հողամասի և լճի ափի երկարությամբ՝ 405 գծամետր: Որպես հիմնատակ նախատեսվել է 20-60 սմ խոշորաբեկոր քարային լիցք մինչև 1900,5 նիշը, որպես հիմք՝ հենապատի տակ ընտրվել են 3000 մմ x 2000 մմ x 500 մմ չափերով գաբիոնային արկղեր, իսկ պատի շարվածքի համար ընտրվել են 2000 մմ x 2000 մմ x 1000 մմ չափերով գաբիոնային արկղեր, որոնք հիմքից և նոր իրականացվող լիցքից առանձնացվում են գեոտեքստիլով: Հենապատի 405 գծամետր երկարությամբ մինչև գծային ցամաքուրդ նախատեսված է հենացամաքուրդ՝ խոշոր ավազի, խճի և կոպիճի շերտերի հաջորդականությամբ, որոնց վրա իրականացվելու է սալիկապատում: Հենացամաքուրդից հետո նախատեսվել է գծային ցամաքուրդ 376 մ երկարությամբ, ծալքավոր խողովակով պոլիմերավազային 8 դիտահորով: Նախատեսված է կատարել 6,3 խմ քարա-խճա-կոպճային լիցք և լիցք տեղական գրունտից՝ 8769,2 խմ ծավալով մինչև 1902,5 նիշը:

Հայտում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ տարածքը հիմնականում ծառապատ է, գործունեության արդյունքում ծառահատումներ չեն իրականացվելու և տարածքում առկա ծառերը պահպանվելու են: Պահպանվելու են մուտքի և ելքի ասֆալտապատ ճանապարհները, նախկին ռեստորանի շենքը (1909,6 նիշում) և պոմպակայանը (1903,32 նիշում), շինություններին հարակից բետոնյա հարթակները, ավտոմայրուղու երկարությամբ մոտ 30 մ բարձրությամբ բազալտյա շուբ քարի շարվածքով հենապատը:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են 2 փուլով՝ նախապատրաստական և հիմնական՝ ընդհանուր 72 օր տևողությամբ:

Շինարարության ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքի ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար: Շինարարության ընթացքում ջրամատակարարումն իրականացվելու է պայմանագրային հիմունքներով՝ ջուրը բերվելու է ավտոցիստեռններով: Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով իրականացվելու է տարածքի ջրցան, մեքենաների թափքը խոնավացվելու և ծածկվելու է անթափանց ծածկոցով, մեքենաների անիվները շինհրապարակ ելումուտ անելիս պարտադիր լվացվելու են, շինարարական տեխնիկան և փոխադրամիջոցները պահվելու են սարքին վիճակում, սորուն նյութերի տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, մեքենաները տեղաշարժվելու են բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարության ընթացքում առաջանալու են թափոններ շինարարական և կենցաղային աղբի տեսքով: Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ) տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված համապատասխան վայրեր:

Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները նախապես որոշված կլինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
SOCIAL IMPACT ASSESSMENT CENTER
02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Տարածքում բացառվելու են թափոնների կուտակումները և դրանք պարբերաբար տեղափոխվելու են համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Բացառվելու է թափոնների այրումը:

Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինհրապարակում քսայուղերի և նավթամթերքի պահեստավորում չի նախատեսվում:

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները կլինեն չնչին, քանի որ նախատեսվել են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում է հանգստյան գոտի և գտնվում է անթրոպոգեն գործոնի ազդեցության տակ: Հայտում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքում իրականացված դիտարկումների ընթացքում հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հանդիպել:

Համաձայն Հայտում ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Աշխատանքները կատարվելու են՝ բացառելով երեկոյան ժամերին աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու նպատակով նախատեսված են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
4. կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
5. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:

Շինարարության ընթացքում մշտադիտարկումների համար նախաձեռնողի կողմից նախատեսվել է հատկացնել ֆինանսական միջոցներ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության ընթացքում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր համայնքում (Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր) անցկացվել է հանրային

քննարկում: Համայնքապետարանը տվել է նախնական համաձայնություն նախատեսվող գործունեության վերաբերյալ: Իրականացվելու է ափապաշտպան միջոցառում՝ ջրածածկման կամ ողողման ենթակա տարածքում առկա կառույցի՝ «Տապան» ռեստորանի պահպանության նպատակով:

Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական մարմիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել Հայտը լրամշակելիս:

Նախաձեռնողը պարտավորվել է շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ ջրօգտագործումն իրականացվելու է պայմանագրային հիմունքներով՝ բերվելու է ավտոցիստեռններով, իսկ ջրահեռացման համար տեղադրվելու են ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու են:

Հողային ծածկույթի վրա ևս ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ համաձայն Հայտում ներկայացված տեղեկատվության՝ հողային աշխատանքներ չեն նախատեսվում:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Բնապահպանական ազդեցությունները հիմնականում կանխատեսվում են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով,
2. ջրային ռեսուրսների պահպանության նպատակով առաջնորդվել Ջրային օրենսգրքի, «Սևանա լճի մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներով՝ բացառելով կեղտաջրերի արտահոսքը դեպի Սևանա լիճ,
3. գործունեությունն իրականացնել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի պահանջներին համապատասխան,
4. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
РА ЕРЕВАН ОЦЕНКА ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

5. օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում ապահովել Հայտում ամրագրված միջոցառումների իրականացումը,

6. բացառել ընդհանուր օգտագործման ճանապարհներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը, կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում,

7. իրականացնել կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ, բացառել ծառահատումները,

8. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի մաքրում և բարեկարգում,

9. ապահովել Հայտում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Էմին Եղիազարյանի կողմից ներկայացված նախկին «Տապան» ռեստորանի շինությունները պահպանելու նպատակով ափամերձ հատվածի ափապաշտպան և ինժեներական լուծումների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան